

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համառոտ նկարագրություն

Բարի գալուստ Սքայնեթ (այսուհետ՝ “Սքայնեթ”, “Մենք”, “Մեզ” կամ “Մեր”):

Սքայնեթը տրամադրում է Լայնաշերտ Ինտերնետ, ծառայություններ (այսուհետ՝ “Ծառայություն/Ծառայություններ”), որոնք մշակվել են նորարարական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ:

Մեր Գաղտնիության Քաղաքականությունը տարածվում է բոլոր այն այցելուների, օգտատերերի և այլոց (այսուհետ՝ “Յուրաքանչյուր”, “Օգտատեր”, “Դուք” կամ “Ձեր”) վրա, ովքեր նման ծառայություններից օգտվելու իրավունք ունենք:

Սույն Գաղտնիության Քաղաքականությունը կարգավորում է www.tins.am, uscab.tins.am կայքերի (“այսուհետ՝ “Կայք”) օգտատերերից ստացված տեղեկատվության հավաքագրման, կիրառման, պահպանման և բացահայտման եղանակները:

Սույն Գաղտնիության Քաղաքականությունը կիրառվում է կայքերի և բոլոր ապրանքների, ծառայությունների և Սքայնեթի կողմից հասանելի ցանկացած այլ ծրագրակազմերի նկատմամբ:

Սույն Գաղտնիության Քաղաքականությամբ սահմանված են Ձեր իրավունքներն ու պարտականությունները: Եթե Դուք համաձայն չեք սույն Գաղտնիության Քաղաքականությամբ սահմանված պայմանների հետ, ապա Դուք իրավունք չունեք օգտվել սույն ծառայություններից:

Երբեմն Մենք Ձեզ կառաջարկենք օգտվել հատուկ ֆունկցիաներից, որոնց նկատմամբ բացի սույն Գաղտնիության Քաղաքականությունից, սահմանված են համապատասխան պայմաններ: Նման դեպքերում, տվյալ ֆունկցիաների նկատմամբ սահմանված պայմանները կկիրառվեն՝ սույն Գաղտնիության Քաղաքականության պայմանների հետ հակասության առկայության դեպքում:

1. Անձնական տվյալներ

Մեզ իրավունք է վերապահվում օգտատերերից ստանալ անձնական տվյալներ տարբեր եղանակներով, ներառյալ, սակայն առանց սահմանափակման, օգտատերերի մեր կայք այցելության, հարցումներին արձագանքելու, ձևաթերթիկներ լրացնելու միջոցով, ինչպես նաև այլ գործունեություն ծավալելու, ծառայություններից, ֆունկցիաներից կամ աղբյուրներից օգտվելու միջոցով, որոնք հասանելի են մեր կայքում: Օգտատերերից, անհրաժեշտության դեպքում, կպահանջվի տրամադրել իրենց անունը և էլեկտրոնային փոստի հասցեն: Օգտատերերն իրավունք ունեն մեր կայք այցելել անանուն կարգավիճակով: Մենք օգտատերերից անձնական տվյալները հավաքագրում ենք միայն այն դեպքում, եթե նրանք իրենց կամքով ցանկանում են մեզ տրամադրել նման տվյալները: Օգտատերերը միշտ իրավունք ունեն հրաժարվել իրենց անձնական տվյալները Մեզ տրամադրելուց, բացառությամբ այն դեպքերի, եթե վերջիններս նպատակ ունեն կատարել կայքի հետ կապված համապատասխան գործողություններ:

2. Ոչ անձնական բնույթի տվյալներ

Սքայնեթն իրավունք ունի հավաքել օգտատերերի մասին ոչ անձնական բնույթի տվյալներ ամեն անգամ, երբ վերջիններս կապ հաստատեն մեր կայքի հետ: Ոչ անձնական բնույթի տվյալները կարող են իրենց մեջ ընդգրկել բրաուզերի անվանումը, համակարգչի տեսակը, տեխնիկական տվյալներ օգտատերերի վերաբերյալ և մեր կայքի հետ կապ հաստատելու միջոցները, ինչպիսիք են՝ օպերացիոն համակարգի տեսակը, ինտերնետային ծառայության պրովայդերի անունը և այլ համանման տեղեկություններ:

3. Ինտերնետային բրաուզերի քուֆիներ

Մեր կայքն իրավունք ունի կիրառել “քուֆիներ” Օգտատիրոջ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Օգտատիրոջ ինտերնետային բրաուզերը քուֆիները պահում է իր կոչտ սկավառակի վրա՝ գրառման նպատակառումներից ելնելով և երբեմն վերջիններիս մասին տվյալները վերահսկելու նպատակով: Օգտատերը իրենց ընտրությամբ կարող են իրենց ինտերնետային բրաուզերի պարամետրերում համապատասխան փոփոխություն կատարելով անջատել քուֆիների գրանցման ֆունկցիան, կամ միացնել քուֆիների ուղարկման ազդանշանի ֆունկցիան: Նման դեպքերում անհրաժեշտ է տեղեկացված լինել այն մասին, որ կայքի որոշ բաժիններ կարող են սխալ գործել:

4. Հավաքագրված տեղեկությունների կիրառման եղանակները

Մենք իրավունք ունենք հավաքագրել և կիրառել օգտատիրոջ անձնական տվյալները

- հաճախորդի սպասարկումը բարելավելու նպատակով

Ձեր կողմից տրամադրած տվյալները մեզ հնարավորություն կտան արձագանքել Ձեր հաճախորդի սպասարկման պահանջներին՝ ավելի արդյունավետ բավարարելու նպատակով:

- օգտատիրոջ փորձը (աշխատանքը) անհատականացնելու նպատակով

Մենք իրավունք ունենք օգտագործել տվյալներն ընդհանուր առմամբ՝ հասկանալու համար, թե ինչպես են մեր օգտատերերը որպես խումբ օգտվում ծառայություններից և մեր կայքում առաջարկված աղբյուրներից:

5. Օգտատերերի տվյալների պահպանման եղանակները

Մենք կիրառում ենք տվյալների հավաքագրման, պահպանման և մշակման համապատասխան եղանակներ և անվտանգության միջոցներ՝ մեր կայքում պահպանված Ձեր անձնական տվյալները, օգտատիրոջ անունները, ծածկագիրը, գործարքի վերաբերյալ տեղեկությունները և տվյալները անհրավասու ներխուժումից, փոփոխումից, բացահայտումից կամ ոչնչացումից պաշտպանելու նպատակով:

6. Օգտատիրոջ անձնական տվյալների տարածում

Մենք իրավունք չունենք այլ անձանց վաճառել կամ ժամանակավորապես տրամադրել օգտատերերի մասին անձնական տվյալները: Մենք իրավունք ունենք մեր գործընկերներին, վստահված անձանց և գովազդատուներին վերոնշյալ նպատակներից ելնելով տրամադրել ընդհանուր բնույթի ժողովրդագրական տեղեկություններ, որոնք պարունակում են անձնական տվյալներ մեր այցելուների և օգտատերերի մասին:

7. Մտավոր սեփականության և հեղինակային իրավունքների պաշտպանում

Մենք հարգում ենք այլ անձանց իրավունքները և նույնն ակնկալում ենք Ձեզանից:

Մենք տրամադրում ենք Ձեզ օժանդակ ծրագրեր, որոնք կօգնեն Ձեզ պաշտպանել Ձեր մտավոր սեփականության և հեղինակային իրավունքները: Եթե դուք բազմիցս խախտեք այլ անձանց մտավոր կամ/և հեղինակային իրավունքները, ապա մեզ իրավունք է վերապահված, անհրաժեշտության դեպքում, փակել ձեր հաշիվը:

8. Երեխաների մասին տվյալների գաղտնիություն

Աքայնեթը չի հավաքում կամ պահանջում տվյալներ 18 տարեկանից ցածր անձանցից, ինչպես նաև չի թույլատրում նման անձանց գրանցվել՝ ծառայություններից օգտվելու նպատակով: Նման ծառայությունները և իրենց բովանդակությունները նախատեսված չեն 18 տարին չլրացած երեխաների համար: Այն դեպքում, եթե մենք տեղեկանանք այն մասին, որ ստացել ենք անձնական տվյալներ 18 տարեկանից ցածր անձանցից առանց վերջիններիս ծնողների համաձայնության, ապա մենք իրավասու ենք անհապաղ ջնջել նման տվյալները: Եթե դուք հավատացած եք, որ մեզ մոտ պահպանվում են ցանկացած բնույթի տվյալներ 18 տարին չլրացած երեխաների մասին, ապա խնդրում ենք կապնվել մեզ հետ:

9. Գործող օրենք և իրավասություն

Մուտք գործելով մեր կայք Դուք ընդունում եք այն փաստը, որ վերջինից օգտվելու և այցելելու հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով: Առաջացած վեճերը կարգավորվում են յուրաքանչյուր կողմի երկու ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից: Այն դեպքում, եթե կողմերը չզան համաձայնության, ապա նշված վեճերը կկարգավորվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

10. Սույն պայմանների ընդունումը

Օգտվելով Մեր կայքից՝ դուք համաձայնվում եք պահպանել սույն քաղաքականության պայմանները: Այն դեպքում, եթե Դուք համաձայն չեք քաղաքականության պայմանների հետ, ապա խնդրում ենք չօգտվել մեր կայքից կամ ծրագրերից: Ձեր կողմից կայքից շարունակ օգտվելը, վերջինիս քաղաքականության մեջ փոփոխությունները հրապարակելուց հետո, կնշանակի, որ Դուք ընդունում եք նման փոփոխությունները:

11. Հետադարձ կապ

Սույն Գաղտնիության Քաղաքականության, կայքից օգտվելու պայմանների կամ կայքում գործարքներ կատարելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք կապնվել մեզ հետ. www.tins.am կամ +374 60 74-75-74:

12. Գաղտնիության քաղաքականության փոփոխություն

Աքայնեթն իր հայեցողությամբ իրավունք ունի ցանկացած պահին փոփոխություն մտցնել սույն Գաղտնիության Քաղաքականությունում: Փոփոխություն մտցնելու դեպքում, մենք էջի ստորին մասում կնշենք վերջին փոփոխման ամսաթիվը: Մենք խորհուրդ ենք տալիս մեր օգտատերերին փոփոխությունները ստուգելու համար հաճախակի մուտք գործել տվյալ էջ, որպեսզի տեղեկացված լինեն այն մասին, թե ինչպիսի եղանակներ են կիրառվում մեր կողմից՝ հավաքագրված անձնական տվյալները պաշտպանելու համար: Դուք հաստատում և համաձայնվում ենք այն մասին, որ պարտավորվում եք պարբերաբար վերանայել սույն Գաղտնիության Քաղաքականությունը և լինել միշտ տեղեկացված փոփոխությունների մասին: Սույն Գաղտնիության Քաղաքականության ցանկացած փոփոխությունից հետո Աքայնեթից կամ իր ծառայություններից մշտական օգտվելը կնշանակի, որ Դուք ընդունում եք նման փոփոխությունները: